ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 03.12.2003

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագիրը (կցվում է):

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ
Ա. Բաղդասարյան

03.12.2003
Ն-062-3

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Հ.Հ	Վերահսկողության առարկան	Վերահսկողության բնույթը	Վերահսկողության ժամանակացանկը
1	Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ կառավարության հաշվետվության համապատասխանությունը «ՀՀ պետական բյուջետային համակարգի մասին», «ՀՀ պետական բյուջեի եւ դրանում կատարված փոփոխությունների մասին» ՀՀ օրենքների պահանջներին	Ամփոփ վերլուծություն	Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի պահանջների
2	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2003 թվականի տարեկան հաշվետվության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներին	Ամփոփ վերլուծություն	Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 103-րդ հոդվածի պահանջների
3	Պետական գույքի մասնավորեցման ծրագրի կատարման մասին կառավարության հաշվետվության համապատասխանությունը «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման ծրագրի մասին» ՀՀ օրենքի պահանջներին	Ամփոփ վերլուծություն	Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 109-րդ հոդվածի պահանջների
4	2004 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, օտարերկրյա պետություններից եւ միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների եւ վարկերի օգտագործման, պետական գույքի մասնավորեցման ծրագրի կատարման ընթացքի մասին ՀՀ կառավարության	Ամփոփ վերլուծություն	Համաձայն «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ

	տեղեկատվության համապատասխանությունը ՀՀ օրենքերին եւ այլ իրավական ակտերին		պալատի մասին» Հայաստանի Հանրապետու-թյան օրենքի 16-րդ հոդվածի պահանջների
5	Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության համատեղ մասնակցությամբ գործող կազմակերպությունների կողմից պետական բյուջեի հանդեպ պարտավորությունների կատարման, պետական բյուջեից հատկացված միջոցների եւ պետական սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման մասին	Ուսումնասիրություն ընտրանքային կարգով համաձայն ԱԺ Վերահսկիչ պալատի եւ Ռուսաստանի Դաշնության Հաշվիչ պալատի միջեւ 2003 թ. հոկտեմ-բերի 1-ին կնքված Հուշագրի	2004 թվականի ընթացքում
6	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կազմակերպություններին տրամադրված սուբսիդիաների օգտագործման մասին	Վերլուծություն	II կիսամյակ
7	Հայաստանի Հանրապետության նախարարություններին, գերատեսչություններին պետական պատվերի եւ ծրագրերի կատարման նպատակով պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաեւ՝ առանձին հոդվածներով նախատեսված եւ փաստացի կատարման միջեւ համապատասխանությունը, այդ թվում՝ • Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում • Հայաստանի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարությունում • Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարությունում • Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեում	Ուսումնասիրություն	II եռամսյակ I եռամսյակ IV եռամսյակ III եռամսյակ
8	Պետական մասնակցությամբ գործող կազմակերպությունների կողմից շահաբաժինների հաշվարկման եւ պետական բյուջե վճարման համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենքներին, այդ թվում՝ • Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարարության համակարգի, • Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգի, • Հայաստանի Հանրապետության առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության համակարգի	Ուսումնասիրություն	III եռամսյակ III եռամսյակ III եռամսյակ
9	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կապիտալ շինարարությանը հատկացված միջոցների օգտագործման մասին	Ուսումնասիրություն ընտրանքային կարգով	III եռամսյակ
10	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից «այլ ծրագրեր»-ով հատկացված միջոցների օգտագործման մասին	Ուսումնասիրություն	II եռամսյակ
11	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանությանը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաեւ եկամուտների առանձին տեսակների գծով մուտքերի հավաքման մասին	Ուսումնասիրություն	II եռամսյակ